«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ-2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԱՌԱՐԿԱ – ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ – ԿԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - «ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

Բաթումի պայմանագիրը և նրա գնահատականը ժամանակակիցների կողմից

Բովանդակության ցանկ

1.Ներածություն

2.Մաս 1-ին Հայաստանի Հանրապետության հռչակումը

3.Մաս 2-րդ Բաթումի պայմանագիրը

4. Մաս 3-րդ Եզրակացություն

5. Օգտագործված գրականության ցանկը

Ներածություն

1918 թվականի մայիսի վերջին Արևելյան Հայաստանում թուրքական զորքերի դեմ հայ ժողովրդի տարած փառավոր հաղթանակներով կյանքի է կոչվում հայկական անկախ պետական պետականություն։ Պատմական այդ բեկումնային իրադարձությամբ բացվում է հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի առաջին էջը։

Հայոց պետականությունը ծնվեց ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանրագույն պայմաններում։ Սակայն կարճ ժամանակում հաջողվեց կազմավորել իշխանության մարմիններ, ազգային բանակ, մի շարք պետությունների հետ հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, հետզհետե աշխուժացավ երկրի մշակութային կյանքը։

Մաս 1-ին

Հայաստանի Հանրապետության հռչակումը

Ազգային անկախ պետականությունը ծնվեց 1918 թվականիտ մայիսի 28-ին և ասպարեզը թողեց 1920 վկականի նոյեմբերի վերջին։ Ապրեց ընդամենը երկուս ու կես տարի։ Երկուս ու կես տարի, որը հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանի շարունակությունն էր։ Եվ դա ոչ թե նրա ստեղծողների և կառավարողների մեղքով, ինչպես մինչև Հայաստանի անկախացումը ԽՍՀՄ-ի կազմից ներկայացրել են մեր աչառու պատմաբաններն ու գաղափարախոսության բնագավառի մյուս աշխատողները, այլ իրերի բերումով և պատմական անբեկանելի իրողությունների դաժան դասավորությամբ։

Այլ բան է իրական-պատմական մարդկանց արած-թողածը, որը դարձյալ ներկայացվել է ոչ անկողմնակալ, ոչ արդար չափանիշներով։

Խորհրդային հայ պատմագրութունը այն համարել է մի աննախադեպ աղետ, որն ազգին հասցրել է կործանումի դուռը. իբր Դաշնակցությունը (ՀՅԴ) նրա համար էր գործի գլուխ անցել և կառավարության հիմնական սանձերը իր ձեռքը վերցրել, որպեսզի հայ ժողովրդի տունը քանդի։

Դաշնակցական ուսումնասիրողներից ոմանք էլ դրությունն այնպես էին ներկայացնում, թե այդ երկուս ու կես տարին մեր ազգի պատմության ամենափառավոր հատվածն են կազմում, արժանի միայն հախուռն գովաբանության ու պանծացումի։

Հարկ կա պնդելու, որ երկու տեսակետներն էլ մոլորություն են, իրականությունը ծուռ հայելու մեջ դիտելու հետևանք։

Հարկ կա ասելու ճշմարտությունը, խնդրո առարկա ժամանակի և նրանում տեղ գտած դեպքերի, այս դեպքերին ուղղություն տված դեմքերի մասին խոսել ու իրատես արդարամտությամբ։

1918 թվականի մայիսի վերջին Անդրկովկասյան Սեյմը, կամ այսպես կոչված, միացյալ կառավարությունը փլվեց, լուծարվեց, և նրա երեք առանձին մասերից գոյացան անկախ կառավարություններ. մայիսի 26-ին գումարվեց Սեյմի վերջին նիստը, որը, վրացիների պնդումով, որոշում ընդունեց այդ մարմնի կազմալուծման մասին։ Նույն օրը գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը Ն. Ժորդանիայի նախագահությամբ, որը հայտարարեց Վրաստանի անկախությունը։

Նույն օրը գումարված Հայոց ազգային խորհրդի նիստը, չնայած բողոքներին ու դժգոհություններին, Վրաստանի անկախությունը ընդունեց որպես փաստ։ Միաժամանակ Հայոց ազգային խորհուրդը իր վրա վերցրեց հայկական շրջաններին ժամանակավոր կառավարության գործառությունները։

Հարկ է նշել, որ այդ օրերին հայ քաղաքական գործիչների միջև անկախության հարցի շուրջ կար տարաձայնություն։ Հայոց ազգային խորհրդի ու Սեյմի անդամները՝ Ա. Ահարոնյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Մամիկոնյանը և ուրիշներ, ինչպես նաև սոցիալիստ-հեղափոխականները (էսեռ) դեմ էին անկախություն հայտարարելուն։ Իսկ Խ. Կարճիկյանը, Ս. Վրացյանը1, Ա. Երզնկյանը և ուրիշներ ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը համարում էին անկախության հռչակումը և հայկական իշխանության կազմակերպումը։

1.Տես՝ Ս. Վրացյան “Հայաստանի Հանրապետությունը”

Մայիսի 27-ին հայտարարվեց “Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության” (ԱԿՄՀ) անկախության մասին։ Հանրապետությունը, ի դեպ, հենց այդ ժամանակ առաջին անգամ իրանական Ատրպատականի անունով պայմանականորեն կոչեցին “Ադրբեջան”։

Հայոց ազգային խորհուրդը հակվեց դեպի Հայաստանի անկախության հայտարարումը։

Անկախության խնդիրը քննարկվեց Ազգային խորհրդի մայիսի 28-ի նիստերում (առավոտյան և երեկոյան)։ Այդ օրը պետք է պատասխան տրվեր նաև Բաթումում թուրքերի կողմից Հայաստանին ներկայացված վերջնագրին։ Բուռն քննարկումներից հետո Հայոց ազգայն խորհուրդը վճռեց հռչակել Հայաստանի անկախությունը։

Ծնունդյան վկայականը գրել են Թիֆլիսում նստող Հայոց ազգային խորհրդի անդամներ Ավետիս Ահարոնոյանը, Նիկոլ Աղբալյանը, Հովհաննես Քաջազնունին և Ալեքսանդր Խատիսյանը2։ Միաժամանակ որոշվեց Հայաստանի (որպես անկախ պետության) նոր պատվիրակություն ուղարկել Բաթում՝ թուրքերի հետ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով։

1918 թվականի մայիսի 30-ին Թիֆլիսի մամուլում Նիկոլ Աղբալյանի ձևակերպումով հրապարակվեց Հայոց ազգային խորհրդի կոչը, որտեղ ասվում էր. “Անդրկովասյան քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն՝ որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու Հայոց ազգային կառավարություն։ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր գործառույթները հայկական գավառների քաղաքական-վարչական ղեկը վարելու համար”։3

Այս հայտարարությունից հետո էլ Ա. Խատիսյանի, Հ. Քաջազնունու և Մ. Պապաջանյանի պատվիրակությունը հունիսի 4-ին Բաթումում Հայոց անկախ հանրապետության անունից հաշտության պայմանագիր կնքեց թուրքերի հետ։

Այսպիսով Հայաստանի հանրապետության հռչակման օրը եղավ մայիսի 28-ը։ Այդ օրը մտել է ազգային տոնացույցի մեջ՝ որպես սրբազան օրերից մեկը։

Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի ամենակարևոր իրադարձություններից է, որը 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի հայոց ազատամարտի արդյունքն էր։ Վերականգնվեց կորսված անկախ պետականությունը։

2.Տես՝ Ալեքսանդր Խատիսյան “Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը”։

3.Տես՝ Ալեքսանդր Խատիսյան “Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը”։

Մաս 2-րդ

Բաթումի պայմանագիրը

Տրապիզոնի հաշտության բանակցություններում (1918թ. մարտի 1-ապրիլի 1) Անդրկովկասի պատվիրակությունը մերժեց ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը (1918թ. մարտի 3), որով Ռուսաստանը Թուրքիային էր թողնում **Արդահանը, Կարսը և Բաթումը:**

Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով (1918թ. մայիսի 11-ին) վերսկսվեցին բանակցությունները Բաթումում։ Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր արդարադատության նախարար Խալիլ բեյը, իսկ անդրկովկասյան պատվիրակությունը՝ ԱԺԴՀ կառավարության նախարար և արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելին։ Պատվիրակության կազմում էին հայ պատվիրակներ՝ խնամատարության նախարար Հ. Քաջազնունին և ֆինանսների նախարար Ալ. Խատիսյանը։ Թուրքերի համար անսպասելի կոնֆերանս ժամանեց նաև գեներալ ֆոն Լոսովի գլխավորած պատվիրակությունը՝ Անդրկովկասում կայսերական Գերմանիայի շահերը պաշտպանելու պատճառաբանությամբ։ Ֆոն Լոսովը պնդում էր, որ Թուրքիան բավարարվի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի շրջանակներով և դրանից դուրս տարածքային պահանջներ չներկայացնի։ Գերմանիայի նպատակն էր կանգնեցնել Թուրքիայի

առաջխաղացումն Անդրկովկասում, թուրքական ազատված ռազմական ուժերն օգտագործել Միջագետքում և Պաղեստինում՝ անգլիացիների դեմ կռվելու համար։

Հայրերը փորձեցին ստանալ գերմանացիների պատշպանությունը։ Ահա թե ինչ են գրում այդ բանակցությունների մասին պատվիրակության խորհրդականներ Հ. Օհանջանյանը և Մ. Պապաջանյանը. “Մենք եղանք Լոսովի մոտ, նրա օգնությունը խնդրեցինք հայրերի պաշտպանության գործում։ Նա խոստացավ այդ մասին հեռագրել կայսր Վիլհելմին և խոստացավ խնդիր հարուցել զինվորներ ստանալու համար, և ասաց, որ եթե հայերը որոշեն պատվիրակություն ուղարկել Գերմանիա, ապա ինքը նրան կվերցնի իր հետ…”։4

Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Լոսովի խորհրդով Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Հ. Օհանջանյանը և Ա. Զուրաբյանը մեկնեցին Բեռլին։ Մայիսի 25-ին գերմանական պատվիրակությունը հեռացավ Բաթումից։

1918թ. մայիսի 30-ին Հայոց ազգային խորհրդի պատվիրակները հասան Բաթում։ Նույն օրը նրանք նամակով դիմեցին թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյին՝ առաջարկելով սկսել անջատ բանակցություններ Հայաստանի և Թուքիայի պատվիրակությունների միջև։ Հայ պատվիրակները տեղեկացնում էին, որ իրենք հանդես են գալիս Հայոց խորհրդի անունից։ Թուրքերը հասել էին իրենց նպատակին. Անդրկովկասի դաշնությունը փլուզվել էր, ջլատվել էին ուժերը։ Սակայն եթե մայիսի 27-ին Խալիլ բեյը Հովհաննես Քաջազնունուն և Ալեքսանդր Խատիսյանին հայտարարում էր, թե “Ազգային խորհրդին չի դիմել և դիմել չի կարող, քանի որ այդպիսի մարմին չի ճանաչում”,5, ապա մայիսյան հերոսամարտերում հայկական զորքի սխրանքի ու փաստացի անկախություն հայտարարելու մասին գրավոր հավասում ստանալուց հետո համաձայնեց նստելու բանակցությունների։

4.Տես՝ “Հայ ժողովրդի պատություն”, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1967թ. , էջ 40

5.Տես՝ Ալ. Խատիսյան “Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը”, Անի կենտրոն, 2018թ.

Մայիսի 30-ին Բաթումում սկսվեցին բանակցություններ թուրքական և հայկական պատվիրակությունների միջև։ Խալիլ բեյը պնդում էր

կատարել իրենց պահանջները՝ Բաքվից հայկական ուժերը դուրս բերել, “Բաքուն մաքրել հեղափոխականներից”։ Հայկական կողմն առաջ էր քաշում Ազգային խորհրդի մշակած ծրագիրը, այդ թվում նաև տարածքային հարցերը։

Միաժամանակ թուրքերը խոստանում էին հրաժարվել հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմանների հարցը քննելուց։ Պատճառաբանվում էր, որ այդ խնդիրը կորոշվի երեք պետությունների փոխադարձ համաձայնությամբ։ Դա նշանակում էր, որ առայժմ անորոշ էր մնում հայկական տարածքների՝ **Լոռու**, **Զանգեզուրի**, **Ղարաբաղի** և այլ շրջանների ճակատագիրը։

1918թ. հունիսի 4-ին Բաթումում ստորագրվեց հայ-թուրքական հաշտության պայմանագիր։ Դրանով օսմանյան կառավարությունն ընդունեց և ճանաչեց Հայաստանի անկախությունը։

Պայմանագրի լրիվ անվանումն է՝ **“Բաթումի պայմանագիր. 1918թ., այսպես կոչված Օսմանյան կայսերական կառավարության և հայկական գավառների գերագույն և միակ իշխանության անունից, ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՎ”** , կնքվել է հունիսի 4-ին Բաթումում։ Թուրքիայի կառավարության անունից պայմանագիրը ստորագրել են Խալիլ բեյը, Վեհիբ Մեհմեդ փաշան, հայկական գավառների գերագույն և միակ իշխանության անունից Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին, Մ. Պարաջանովը։

Պայմանագիրը պարտադրված ակտ էր ռազմական գերակշռություն ունեցող Թուրքիայի կողմից և ստորագրվել է Անդրկովկասում թուրքերի հարձակման պայմաններում։

Բաթումի պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածից։

Առաջին հոդվածով հռչակվում էր “խաղաղություն և հարատև բարեկամություն” երկու կառավարությունների միջև։ Երկրորդ հոդվածով որոշվում էր Օսմանյան կայսրության և Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանը, ըստ որի Հայաստանի հանրապետության տարածքը պարփակվում էր Երևանի գավառի մի մասով և հարակից մի քանի շրջաններով՝ ընդհանուր առմամբ 12 հազար կմ քառակուսի տարածությամբ։ Չորրորդ հոդվածով նախատեսվում էր Թուրքիայի ռազմական օգնությունը, եթե Հայաստանի Հանրապետությունը խնդրեր

նրանից՝ “երկրի ներսում կարգն ու հանգստությունն ապահովելու համար”։ Այս հոդվածը հնարավորություն էր ընձեռնում Թուրքիային՝ ցանկացած առիթն օգտագործել Հայաստանը զավթելու համար։ Հինգերորդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր թույլ չտալ իր տարածքում հակաթուրքական զինված խմբերի կազմավորում։ 6-ից 10-րդ հոդվածները հիմնականում ուղղված էին Հայաստանում իսլամադավան բնակչության իրավունքների պաշտպանությանը, երկաթուղիների օգտագործման, փոստ-հեռագրային հարցերին։ 11-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր պայմանագրի ստորագրումից հետո անհապաղ դուրս բերել Բաքվից իր բոլոր զինված ուժերը։ Բրեստի հաշտության պայմանագրի այն բոլոր հոդվածները, որոնք չէին հակասում Բաթումի պայմանագրին, մնում էին ուժի մեջ (հոդված 12)։ Պայմանագրի վավերացման պայմանները սահմանվում էին 14-րդ հոդվածով։

Կնքվեցին նաև լրացուցիչ պայմանագրեր Հայաստանի խճուղային ճանապարհների օգտագործման, հայկական ռազմական ուժերի անհապաղ զորացրման և այլնի վերաբերյալ։ Թուրքական կառավարությանն իրավունք էր վերապահվում Հայաստանում ունենալ իր ռազմական կոմիսարները, որոնք հետևելու էին խճուղային ճանապարհներով թուրքական զորքերի անարգել փոխադրումներին։ Նույն օրը թուրքական կառավարությունը պայմանագիր կնքեց նաև Վրաստանի հետ, որով Թուրքիային անցան Կարսը, Արդվինը, Արդահանը, Բաթումը, Ախալքալաքն ու Ախալցխան։

Պայմանագրի պայմանները Հայաստանի համար ծանր էին։ Թուրքիան զավթեց ոչ միայն **Արդվինը**, **Կարսը**, **Արդահանը**, **Օլթին**, **Կաղզվանը**, **Ախալքալաքը**, **Ախալցխանը**, այլև ամբողջը **Սուրմալուի գավառը**, **Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների երեք քառորդը**, **Երևանի գավառի կեսը**, **Շարուր-Դարալագյազի մեկ հինգերորդ մասը: Թուրքերին էր մնում Ալեքսանդրապոլը**, **երկաթուղին՝ մինչև Ջուլֆա: Հայաստանի Հանրապետությանը փաստացի մնում էր 12 հազար քառ.կմ տարածք**, **որն ընդգրկում էր Սևանա լճի ավազանը և Արարատյան դաշտի մի մասը:**

Գերմանացի դիվանագետներից մեկի խոսքերով՝ “հայրերին թողեցին Սևանում լողանալու տեղ, բայց չորանալու տեղ չթողեցին” ։

Բաթումիի պայմանագիրը Հայաստանի Հանրապետության առաջին արտաքին քաղաքական ակտն էր։ Այդ պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը կախման մեջ էր ընկնում Թուրքիայից։ Սակայն պայմանագիրը երկար կյանք չունեցավ, այն գործեց միայն մի քանի ամիս։ Այն իրավական ուժ չի ունեցել, որովհետև չի վավերացվել ոչ Հայաստանի, ոչ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից, ինչը նախատեսված էր պայմանագրի վերջին՝ 14-րդ հոդվածով։

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունը, Մուդրոսի զինադադարի կնքումը (1918թ. հոկտեմբերի 30) և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի չեղյալ հայտարարելը հնարավորություն տվեցին Հայաստանի Հանրապետությանը հրաժարվել Բաթումի պայմանագրից։

1918թ. դեկտեմբերի սկզբին թուրքական զորքերը դուրս քշվեցին Անդրկովկասից, 1919թ. ապրիլին թողեցին Կարսի մարզը։

ՄԱՍ 3-ՐԴ

Եզրակացություն

Բաթումի պայմանագիրը միանշանակ չընդունվեց հայ գործիչների և հասարակական-քաղաքական ուժերի կողմից։

Զորավար Անդրանիկը չճանաչեց այն և իր կամավորական ջոկատով հեռացավ Սյունիք ու Նախիջևան։ Ժողովրդական մեծ զորապետն անհաշտ էր այն կառավարության հետ, որը համարում էր, իբր, հայակեր թուրքի պարգևածը։ Եվ քաշվելով Զանգեզուր, ասես այնտեղ ստեղծել էր իր պետությունը Հայաստանի Հանրապետության կողքին։

Հիմա գուցե դժվար է այդ քայլի արդարացումը գտնել, քանի որ այն օրերին Հայաստանը, թեկուզև և փոքրիկ, թեկուզ խեղճ ու անճար, բայց փաստորեն հայ ժորովրդի մնացորդաց հավաքատեղին էր և ամենայն պաշտպանության կարոտ։

Բայց որքա՜ն երախտապարտ ենք զորավարին, որ Զանգեզուրում նստած՝ այն փրկեց թշնամիների ներխուժումից։ Հակառակ դեպքում երևի հանրապետությունն անկարող լիներ դիմադրել մուսավաթին, որն այս կողմերում եռանդուն գործում էր՝ թուրքերի և ծախու անգլիացիների բազմակողմանի հովանավորության ներքո։

Հնչակյան կուսակցության Թիֆլիսի կենտրոնական վարչությունը ևս պահանջեց չեղյալ համարել Բաթումի պայմանագիրը։ Իրենց բողոքի ձայնը բարձրացրին նաև Երևանի հայոց ազգային խորհրդի դաշնակցական թևը, ՀՅԴ Թիֆլիսի կոմիտեն։

Սակայն պատվիրակության ղեկավար Ա. Խատիսյանն Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանին գրած նամակում “իրեն երջանիկ էր համարում, որ վկան էր եղել Հայոց նոր պետականության ծննդի և համոզված էր, թե մեր փոքրիկ բույնն աստիճանաբար կծավալվի կընդարձակվի, կդառնա ամենայն հայոց երազած տունն ու հայրենիքը”6։

Իսկ Ա. Խատիսյանի և Մ. Պապաջանյանի հետ պայմանագիրը ստորագրած Հ. Քաջազնունին այսպես է արտահայտվել Հայաստանի անկախության հայտարարության մասին. “Ընտրություն անելու տեղ չէր մնացել։ Պատմությունը բերել կանգնեցրել էր մեզ մի որոշ գծի առջև. պետք է հանդգնություն ունենայինք անցնել վրայից, եթե չէինք ուզում խորտակվել։ Պետք է տեր դառնայինք մեր հայրենիքին, ապա թե ոչ, կկորցնեինք այն՝ գուցե անդառնալիորեն։ Եթե տատանվեինք, եթե ուշացնեինք մեր հայտարարությունը, Հայաստանը... բաժին կդառնար հարևաններին՝ թուրքերին, վրացիներին, ադրբեջանցիներին”։

Հայաստանի Հանրապետության պետական այրերից Սիմոն Վրացյանը հետագայում իր հուշերում գրում էր, որ իր կյանքի հենց առաջին օրերից

Հայաստանի հանրապետության “Խորհուրդը դուրս եկավ ներքին շաղախից զուրկ, ամուր մեծամասնություն չունեցող, հակամարտություններով և անակնկալներով հարուստ մի մարմին։ Նրա այս հիվանդությունը բնածին էր և մինչև վերջ էլ կարելի չեղավ դարմանել...”։7

Սակայն ինչ էլ որ լիներ, ծնվել էր Հայաստանի նոր պետականությունը։ Այն պետք էր առաջ գնար, զարգանար ու ամրանար։ Եվ եթե ունեցավ ավելի շատ խորտակումներ, քան բնականոն վերելք, դա էլ հետևանք էր ոչ թե բնածին հիվանդության, այլ առավելս միջազգային բարդ իրադրության։

Կառավարողը՝ ժողովուրդը, պատրաստ էր վերածննդի ու բնական զարգացման, խանդավառ աշխատանքի և մեծ հաղթանակների։ Ժամանակակիցները վկայել են, երբ Ազգային խորհուրդն առաջին նիստից հետո սպարապետ Թովմաս Նազարբեկյանի գլխավորությամբ կազմակերպել է զորահանդես, և զինական նոսր, բայց խրոխտ շարքերի վրա ծածանվել է հայոց դրոշակը (եռագույնը) , փողոցներ ելած հայությունը երջանիկ ցնծություն է ապրել, մարդիկ արտասվել են ուրախությունից.

Հայոց նոր պետություն, խորհրդարան, կառավարություն, զորք ու դրոշակ... Ինչ իրականություն պիտի բացվեր, ինչպիսի ճանապարհ, ինչ բաղձալի հեռանկար...։

7.Տես՝ Սիմոն Վրացյան “Հայաստանի Հանրապետությունը”, ցանկ. հրատ.։

Օգտագործված գրականության ցանկը

1. Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, ցանկ. հրատ., Անի կենտրոն 2018թ.

2. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, ցանկ. հրատ.:

3. Ա. Եսայան, Հայաստանի միջայգային իրավական դրությունը 1920-1922թ.թ. , Երևան 1967թ.:

4. Մ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան 1973թ.:

5. Մ. Ս. Կարապետյան, Հայաստանը 1912-1920թ.թ , Երևան 2003թ.:

6. Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1967թ.:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (4.VI.1918թ.)